ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

2016 թվականի փետրվարի 14-ից ի վեր իրականացվել է համայնքների միավորման թվով 99 ծրագիր, ինչի արդյունքում 915 համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է թվով 57 բազմաբնակավայր համայնք, ուստի նախագծի ընդունման արդյունքում դրանց թիվը կդառնա 55, իսկ ընդհանուր համայնքների թիվը՝ Երևանը, Գյումրին և ևս 5 չմիավորված համայնքերը ներառյալ՝ 62:

Միավորված համայնքներում իրականացվել են վերլուծություններ՝ համայնքային փնջերի ծրագրային առաջնահերթությունների վերաբերյալ, ինչի արդյունքում հրապարակվել է այդ վերլուծությունների ամփոփ հաշվետվությունը (այն զետեղված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում):

Վարչատարածքային բարեփոխումների ծրագրի շրջանակներում համայնքների միավորումն իրականացվել է հիմնականում երկու մոդելով՝ «փնջային» և «շրջանային»:

2018, 2019, 2021 թվականներին համայնքների միավորման թեմայով անցկացված հանրային քննարկումների ընթացքում բնակչության մեծամասնությունը հակված է եղել համայնքների միավորման «շրջանային» մոդելին: 2021 թվականին իրականացված համայնքների միավորման ծրագրերի գերիշխող մասն իրականացվել է այդ տրամաբանությամբ:

Ինչպես ցույց է տվել անցած տարիների փորձը՝ «շրջանային» մոդելով համայնքների միավորումն ունեցել է առավելություններ «փնջային» մոդելի համեմատությամբ: Մասնավորապես,

1) Կառավարման արդյունավետության բարձրացում.

Ռեսուրսների կենտրոնացում: Խոշոր համայնքներն ունեն ավելի մեծ ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսներ, ինչը թույլ է տալիս ավելի արդյունավետ կառավարել ենթակառուցվածքները, մատուցել ավելի որակյալ և իրականացնել ավելի լայնածավալ ծրագրեր:

Կառավարման ծախսերի օպտիմալացում: Մի շարք վարչական գործառույթներ (հաշվապահություն, իրավաբանական ծառայություններ, կադրերի կառավարում) կենտրոնացվել և իրականացվել են ավելի նվազ ծախսերով, քան փոքր համայնքներում:

Մասնագիտացված կադրերի ներգրավում: Խոշոր համայնքները ավելի գրավիչ են բարձր որակավորում ունեցող մասնագետների համար, ինչը նպաստել է կառավարման որակի բարձրացմանը և նորարարությունների ներդրմանը:

Որոշումների կայացման արագացում: Շրջանային մակարդակում ավելի հեշտ է համակարգել համայնքների գործողությունները և արագացնել կարևոր որոշումների կայացման գործընթացը:

2) Տնտեսական զարգացման խթանում.

Ներդրումների ներգրավման հնարավորությունների ընդլայնում: Խոշոր համայնքները ավելի մեծ ներքին շուկա են ներկայացնում և ավելի գրավիչ են ներդրողների համար: Շրջանային մակարդակում հնարավոր է դարձել մշակել և իրականացնել ավելի լայնածավալ զարգացման ծրագրեր:

Ենթակառուցվածքների զարգացում: Խոշոր համայնքները ավելի մեծ հնարավորություններ են ստացել մասնակցելու ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերին. ինչը նպաստել է տնտեսական ակտիվության աճին:

Մրցունակության բարձրացում: Շրջանային մակարդակում հնարավոր է դարձել ավելի արդյունավետորեն օգտագործել առկա ռեսուրսները և զարգացնել մասնագիտացված տնտեսական ուղղություններ, ինչը բարձրացրել է տարածաշրջանի մրցունակությունը:

3) Սոցիալական համախմբվածության ամրապնդում.

Հավասար հնարավորությունների ապահովում: Խոշոր համայնքները ավելի լայն հնարավորություններ կարող են ստեղծել բնակիչների համար կրթության, առողջապահության, մշակույթի և սոցիալական ծառայությունների հասանելիության

առումով՝ անկախ բնակության վայրից:

Տարածքային անհավասարությունների կրճատում: «Շրջանային» մոդելով համայնքների միավորումը կարող է օգնել հավասարեցնել զարգացման մակարդակները տարբեր համայնքներում:

4) Մարդկային կապիտալի զարգացում և մասնակցային կառավարում

Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում՝ մեծ համայնքները կարող են խրախուսել ներգաղթ, երիտասարդության վերադարձ և մասնագիտական ներուժի զարգացում:

Քաղաքացիների մասնակցության բարձրացում՝ ավելի կայուն և կազմակերպված համայնքները հնարավորություն են տալիս զարգացնել մասնակցային բյուջետավորումը և բաց կառավարման մեխանիզմները.

5) Տարածքային պլանավորման արդյունավետության բարձրացում.

Համակարգված զարգացման պլանավորում: Շրջանային մակարդակում ավելի հեշտ կլինի մշակել և իրականացնել տարածքային զարգացման համակարգված ծրագրեր, որոնք կհաշվի առնեն բոլոր համայնքների կարիքներն ու ներուժը:

Բնական ռեսուրսների կայուն կառավարում: Հնարավորություն է ստեղծվել ավելի արդյունավետ կառավարել բնական ռեսուրսները շրջանային մակարդակում՝ հաշվի առնելով էկոլոգիական հիմնախնդիրները և ապահովելով կայուն զարգացումը:

Այս հիմնավորումները ցույց են տալիս, որ համայնքների խոշորացումը շրջանային մոդելով կարող է էականորեն բարելավել կառավարման արդյունավետությունը, խթանել տնտեսական զարգացումը, ամրապնդել սոցիալական համախմբվածությունը և բարձրացնել տարածքային պլանավորման որակը:

2023 թվականի դեկտեմբերի 8-ին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում ՀՀ վարչապետի կողմից անցկացրած խորհրդակցության ընթացքում Վարչապետը, անդրադառնալով համայնքների խոշորացման գործընթացին՝ նշեց, որ «այն համայնքները, որոնք շրջանային մոդելով չեն խոշորացվել, զարգացման ընդհանուր գործընթացներում առաջընթաց չեն արձանագրում»:

Վերոնշյալ խորհրդակցության № Վ/191-2023 արձանագրության 3.1-ին կետով

հանձնարարվել է.

«վարչատարածքային բարեփոխումների տիրույթում ևս մեկ անգամ անդրադառնալ համայնքների միավորման շրջանային մոդելից շեղումներին, ըստ այդմ՝ քննարկել համայնքների միավորման հետագա գործընթացը շրջանային մոդելով իրականացնելու հնարավորությունը, եթե սկզբունքային խոչընդոտներ առկա չեն՝ ելնելով մի շարք գործոններից (օրինակ՝ բնակչության թվաքանակ և այլն)»:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով նախատեսվում է ձևավորվել հետևյալ համայնքները.

ՀՀ Արարատի մարզի Արարատ, որում ներառվել են ներկայիս Արարատ և Վեդի համայնքները՝ վերջիններիս կազմում ընդգրկված թվով 32 բնակավայրերով.

Պատմական փաստերը վկայում են, որ Վեդի քաղաքը մինչև 1995 թվականի վարչատարածքային բաժանումը ունեցել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ: Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներից սկսած վարչական վերափոխումների արդյունքում Վեդին դարձավ Վեդու շրջանի կենտրոն, իսկ հետագայում՝ Արարատի շրջանի կենտրոն (մինչև շրջանների վերացումը 1995թ.):

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, որում ներառվել են ներկայիս Վանաձոր և Փամբակ համայնքները՝ վերջիններիս կազմում ընդգրկված թվով 22 բնակավայրերով.

Փամբակ համայնքը ձևավորվել է 2021 թվականին «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում: Փամբակ համայնքը կազմված է 18 գյուղական բնակավայրից, որի վարչական կենտրոնը համարվում է Փամբակ գյուղը: Վանաձոր և Փամբակ համայնքների միավորման արդյունքում կունենանք Վանաձոր համայնքը, որի վարչական կենտրոնը կլինի Վանաձոր քաղաքը:

Այսպիսով, առաջարկվող ծրագրերում ներգրավված է լինելու թվով 4 համայնք, 54 բնակավայր, որոնց միավորման արդյունքում ձևավորվելու է թվով 2 համայնք:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի համաձայն՝ նախատեսվում է իրականացնել համայնքների միավորման 2 ծրագիր՝ ՀՀ Արարատի

մարզի Արարատ և Վեդի, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր և Փամբակ համայնքների խոշորացման մոդելով:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու նպատակն է՝ վերոնշյալ խոշորացված համայնքներում նշանակել համայնքի ավագանու ընտրություն, միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները դադարեցնել և նոր ձևավորվող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամկետների վերաբերյալ տալ իրավակարգավորումներ:

Մասնավորապես՝ սահմանվում է, որ Ընտրություններն անցկացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2027 թվականի համար սահմանված ընտրական օրերից այն օրը, որ պահպանվեն տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման համար «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված ժամկետները: Մինչև առաջին նիստի գումարման պահը, որով սկսվում են նորընտիր համայնքների ավագանիների լիազորությունների ժամկետները, նախորդ գումարման տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները շարունակվում են պահպանվել:

Հարկ է նշել, որ Արարատ, Վանաձոր, Փամբակ համայնքներում տեղական ինքնակառավարման մարիների ընտրությունները ԿԸՀ-ի կողմից նշանակվել և կայացել են 05.12.2021թ., իսկ Վեդի համայնքում՝ 27.03.2022թ.:

Ընդ որում, Վեդի համայնքում համայնքի ավագանին իր լիազորությունները ստանձնել է 28.04.2022թ., Արարատ համայնքում՝ 08.02.2022թ., Վանաձոր համայնքում՝ 14.12.2022թ., Փամբակ համայնքում՝ 20.12.2021թ.:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

4. Ակնկալվող արդյունքը

Իրավական ակտերի փաթեթի կիրառման դեպքում կապահովվի համայնքների միավորման գործընթացի իրավական բազան:

5. «Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ».

Նախագիծը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ №1363-Ա որոշմամբ հաստատված և Ազգային ժողովի 26.08.2021թ. №ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.) հավելվածի 6.6-րդ կետից, ըստ որի՝ Կառավարությունը շարունակելու է ջանքեր գործադրել հետևյալ թիրախների ուղղությամբ՝

- Վարչատաչածքային բարեփոխումների և տարածքային զարգացման գործընթացների ինտեգրում՝ տեղական ու տարածքային գերակայությունների շուրջ սոցիալ-տնտեսական զարգացում և ամուր համագործակցության ձևավորում, տարածքային և տեղական դերակատարների կարողությունների բարձրացում:
    - Շարունակվելու է համայնքների միավորման գործընթացը: